

Արդյոք ձեր կազմակերպությունը պատրաստ է զբաղվելու սոցիալական ձեռնարկատիրությամբ

I. Շահագրգիռ կողմերի աջակցությունը Այո / Ոչ

- | | | |
|---|--------------------------|--------------------------|
| 1. Ձեր կազմակերպությունը ձեռնարկատիրական գաղափարի իրագործման նկատմամբ ունի երկարաժամկետ նվիրվածություն: | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |
| 2. Ձեռնարկությունը օգնում է իրականացնել կազմակերպության առաքելությունը: | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |
| 3. Ձեր նախագահությունը սատարում է ձեռնարկության գաղափարին: | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |
| 4. Ձեր աշխատակազմը սատարում է ձեռնարկության գաղափարին: | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |
| 5. Ձեր անդամներն ու շահառուները սատարում են ձեռնարկության գաղափարին: | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |

II. Կազմակերպական պատրաստվածություն Այո / Ոչ

- | | | |
|--|--------------------------|--------------------------|
| 1. Ձեռնարկատիրական գաղափարը համապատասխանում է ձեր կազմակերպության կարողունակություններին և ուժեղ կողմերին: | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |
| 2. Ձեր կազմակերպությունը լավ պատկերացում ունի ձեռնարկության իրագործելիության, հնարավոր ծախսերի, ռիսկերի և վտանգների մասին: | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |
| 3. Ունեք առնվազն մեկ աշխատակից, ով բիզնեսի վարման փորձ կամ ունակություններ ունի, ով կարող է զբաղվել ձեռնարկատիրությամբ: | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |
| 4. Այդ անձին սատարում են նախագահությունը, աշխատակազմը, անդամներն ու շահառուները: | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |
| 5. Ձեր աշխատակազմը բավարար ժամանակ ունի ձեռնարկությամբ զբաղվելու համար: | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |
| 6. Ձեր հիմնական շահագրգիռ կողմերը՝ նախագահությունը, աշխատակազմը, անդամներն ու շահառուները պատրաստակամ են ձեռնարկության հաջողման համար հավելյալ ջանքեր գործադրել: | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |
| 7. Ձեր աշխատակազմը ձեռնարկություն վարելու բավարար հմտություններ ունի: | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |
| 8. Ձեր կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեություն սկսելու համար համապատասխան տարածք և սարքավորումներ ունի: | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |
| 9. Ունեք ձեռնարկության մանրամասն և իրագործելի բիզնես պլան: | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |
| 10. Ձեռնարկության ձախողման պարագայում ունեք արդյոք անկանխատեսելի իրավիճակների կառավարման գործողությունների ծրագիր: | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |

III. Կազմակերպական մշակույթ Այո / Ոչ

- | | | |
|--|--------------------------|--------------------------|
| 1. Ձեր կազմակերպությունն իրեն ձեռներեց է համարում | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |
| 2. Ձեր կազմակերպությունը պատրաստ է ռիսկերի դիմել և դրանք կառավարել | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |

3. Ձեռնարկության նպատակն ու առաքելությունը պարզ են բոլոր ներգրավված կողմերի համար:
4. Ձեր կազմակերպությունը պատրաստ է անհատական և կազմակերպական փոխակերպումների/փոփոխությունների:
5. Կազմակերպության ներսում կա համաձայնություն եկամուտի/շահույթի օգտագործման վերաբերյալ:
6. Ձեր կազմակերպությունը բիզնեսի վարման հակվածություն/ուղղվածություն ունի:

IV. Ֆինանսական պատրաստվածություն

Այո / Ոչ

1. Ձեր կազմակերպությունը վերջին երեք տարիների ընթացքում ֆինանսապես «կայուն» է եղել (այսինքն՝ հոգացել է բոլոր ծախսերը կամ ավելցուկ է ունեցել):
2. Ձեր կազմակերպության եկամուտը ստացվում է առնվազն երեք աղբյուրներից:
3. Ունեք ձեռնարկության եկամուտի իրագործելի թիրախ/նպատակ:
4. Դուք կարող եք առանց շահույթի (կամ ֆինանսական կորուստներով) աշխատել՝ հոգավոր ձեռնարկության հետ կապված ֆինանսական ծախսերը մինչև երեք տարի ժամանակահատվածի համար:
5. Ունեք պահուստային կապիտալ, որը կարող եք ներդնել ձեռնարկության մեջ:
6. Ձեր ներկայիս դոնորները կշարունակեն ձեր կազմակերպությունը ֆինանսավորել, եթե Դուք սկսեք ձեռնարկատիրական գործունեություն:
7. Դուք հնարավորություն ունեք ձեռնարկության համար լրացուցիչ ֆինանսավորում գտնել:
8. Հնարավոր է ստանալ ցածր տոկոսադրույքով վարկեր կամ ծրագրի հետ կապված ներդրումներ:
9. Կան այլ կազմակերպություններ, որոնց հետ կարող եք համագործակցել, որպեսզի կիսվեն ֆինանսական ռիսկերը:
10. Ունեք գումար արտաքին խորհրդատուներ վարձելու համար: